ՀՏԴ՝ 929:75(479.25)Աղաջանյան
DOI: 10.54503/2579-2830-2024.1(11)-120

ՍՏԵՓԱՆ ԱՂԱՋԱՆՅԱՆԻ ԴՈՆԻՌՈՍՏՈՎՅԱՆ ՇՐՋԱՆԻ ՄԻ ՔԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՄԱՐԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ*

Հղման համար. Աբրահամյան, Մարի: «Ստեփան Աղաջանյանի դոնիռոստովյան շրջանի մի քանի ստեղծագործությունների մասին»: *Արվեստագիտական հանդես,* N 1 (2024): 120-128. DOI:10.54503/2579-2830-2024.1(11)-120

Հայ կերպարվեստի ռեալիստական դիմանկարչության ակնառու ներկայացուցիչ Ստեփան Աղաջանյանի (1863-1940) ստեղծագործությունում առանցքային նշանակություն ունի դոնիռոստովյան ժամանակաշրջանը (1904-1921): Այս շրջանի աշխատանքներում նորովի են դրսևորվում նկարչի գեղանկարչական կարողությունները, դիմանկարներն առանձնանում են մուգ գունային հագեցած զուգակցումներով, լույսի և ստվերի գրագետ մոդելավորմամբ, ինչը ցայտուն արտահայտված է, հատկապես, «Քրիստափոր Հուսիկյանցի դիմանկարը» (1908, ՀԱՊ), «Կնոջ դիմանկար» (1914-1916, ՀԱՊ), «Մարիետա Շահինյանի դիմանկարը» (1916, 1919, ՀԱՊ) աշխատանքներում: Հոգեթափանց դիմանկարչին հաջողվել է վարպետորեն վերարտադրել բնորդների հոգեբանական նկարագիրը, ստեղծել իրապաշտական երփնագրության լավագույն օրինակներ:

Բանալի բառեր՝ Ստեփան Աղաջանյան, դոնիռոստովյան շրջան, ռեալիզմ, հոգեբանական դիմանկար, երանգաշար, գունային մուգ համադրություն, վրձնաքսվածք:

«Միտքը և զգացումը, իրենց ներդաշնակության
ամենաբարձր դրսևորման մեջ, անհրաժեշտ են ոչ միայն
արվեստի գործ ստեղծելու, այլև այն ընկալելու համար» [8, էջ 150]:
Մարտիրոս Սարյան

Ներածություն

Ինչպես հայտնի է՝ 19-րդ դարավերջի և 20-րդ դարի առաջին կեսի հայ իրապաշտական դիմանկարչության խոշոր ներկայացուցիչ Ստեփան Աղաջանյանի «ստեղծագործական ժառանգությունը վիթխարի դեր է խաղացել կերպարվեստի, հայ ազգային դպրոցին հատուկ, գեղանկարչական բարձր որակի ձևավորման գործում» [10, էջ 505]: Նկարչի ստեղծագործական կյանքում նշանակալից է դոնիռոստովյան ժամանակաշրջանը:

Շուրջ 17 տարի՝ 1904-ից մինչև 1921 թվականը, Ստեփան Աղաջանյանը ապրել և ստեղծագործել է Դոնի Ռոստովում (Նոր Նախիջևան)՝ կերտելով ռեալիստական ամուր հիմքով, հոգեբանական խորը ընկալմամբ ինքնատիպ դիմապատկերներ:

Հարկ է նկատել՝ եթե Շուշիում կատարված (1900-1902) աշխատանքներում երփնագիրը ներկայանում է տոնային մեղմ լուծումներով, լուսաստվերային ան-

* ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի հայցորդ, mariabrahamyan.art@gmail.com, հոդվածը ներկայացնելու օրը՝ 22.06.2023, գրախոսելու օրը՝ 01.12.2023, տպագրության ընդունելու օրը՝ 03.06.2024:

ցումների նուրբ մշակմամբ, ապա ռոստովյան ստեղծագործություններն ակտիվ են մուգ վրձնաքսվածքների ինտենսիվ շեշտադրումներով:

Այս շրջանում ընդլայնվում է արվեստագետի ստեղծագործությունների թեմատիկան, պատկերագրման մտահորիզոնը, ստեղծվում են կերպարային բազմազանությամբ, բովանդակությամբ հարուստ կենդանագրեր:

Հատկանշական է, որ Ստեփան Աղաջանյանի դոնիռոստովյան շրջանի ստեղծագործությունները համակողմանիորեն ուսումնասիրվել է արվեստաբան Եղիշե Մարտիկյանի կողմից [5, էջ 72-104; 6, էջ 31-50, 13; էջ 10-14]:

Համակարծիք ենք նրա այն դիտարկմանը, որ ստեղծագործական միջավայրի փոփոխությունն իր բարերար ազդեցությունն է ունեցել նկարչի պատկերաոճում՝ ռեալիստական աշխարհայացքի ամրապնդման ուղղությամբ, գույնը ստացել է նոր արտահայտություն՝ «ընդունելով լուսավոր կոլորիտի անհրաժեշտությունը» [5, էջ 85]:

Մեծ վարպետի ստեղծագործական կյանքում նշանակալից են Դոնի Ռոստովում կազմակերպվող ամենամյա «Գարնանային ցուցահանդեսները»[1], շփումը հայ և ռուս գեղանկարիչների հետ:

Գեղանկարիչ Հովակիմ Հովհաննիսյանի վկայությամբ՝ Աղաջանյանը վայելում էր իր արվեստակից ընկերների առանձնակի հարգանքն ու ակնածանքը: Նրա աշխատանքները միշտ ուշադրության կենտրոնում էին: Ճիշտ է, անկումային արվեստը թմբկահարող մասնագիտական մամուլը ժլատ էր նկարչի հանդեպ, բայց և միաժամանակ անուժ էր անտեսելու Աղաջանյանի տաղանդն ու վարպետությունը [7, էջ 25]:

Քրիստափոր Հուսիկյանցի դիմանկարը

Ստեփան Աղաջանյանի դոնիռոստովյան շրջանի ստեղծագործություններից գունային լակոնիկ մեկնաբանությամբ առանձնանում է անվանի նկարիչ, ճարտարապետ «Քրիստափոր Հուսիկյանցի դիմանկարը» (1908):

Դարչնագորշ երանգավորմամբ ետնաֆոնին, կիսաթեք, միակողմ լուսավորվածությամբ ներկայանում է Հուսիկյանցի տիպարի իրապաշտական գեղանկարչությանը հարազատ կերպավորումը:

Դիմապատկերի երփնագիրը հագեցած է դարչնասպիտակավունի, բաց և մուգ շագանակագույնի, դեղնաօքրայի խտացված երանգաշարով:

Վրձնի պիրկ, ընդգրկուն քսվածքներով կերտված են գլուխն ու կրծքավանդակը, համաչափ, գծագրային ճշգրտությամբ կառուցված է դեմքը:

Բնորդի զուսպ, ստատիկ կեցվածքը, հոնքերի երկայնական ձգվածությունը, դեմքի, աչքերի շրջանում լուսագունային խաղով նկատելի ծալքերը նպաստում են հայացքի խոհական, հանգիստ արտահայտությանը:

[1] Դոնի Ռոստովում կազմակերպվող ամենամյա «Գարնանային ցուցահանդեսներին» մասնակցել են նաև Ստեփան Աղաջանյանի մտերիմ ընկերներ՝ գեղանկարիչներ Հմայակ Արծաթպանյանը (1876-1919) և Հովակիմ Հովհաննիսյանը (Ակիմ Օվանեսով, 1883-1967): Վերջինս նշանակալի տեղեկություններ է հաղորդում այդ ցուցադրությունների վերաբերյալ [11, էջ 16, 29]:

Թխավուն բաճկոնին նկատելի կոճակները, ակնոցի շրջանաձև ուրվագիծը, վերնազգեստի օձիքի ոսկեզօծ եզրազարդը լրացնում են նրբանկատ հագուկապը՝ բնորդին դարձնելով ազդեցիկ և նշանակալի:

Ակնհայտ է, որ դիմանկարչին հաջողվել է զուսպ երանգաշարով, դիպուկ ու հստակ քսվածքներով ստեղծել անվանի մտավորականի դիմանկարը:

Հուսիկյանցի կերպարագրմանն անդրադարձել է նաև ռուս անվանի գեղանկարիչ Իլյա Ռեպինը, որի 1867-ին ստեղծած գրաֆիկական աշխատանքի վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ են զետեղված ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արարատ Աղասյանի՝ Քրիստափոր Հուսիկյանցին նվիրված հոդվածում [1, էջ 278-279]:

Իլյա Ռեպինի «Քրիստափոր Հուսիկյանցի» գրաֆիկական աշխատանքի կատարումն անկաշկանդ է և ինքնաբուխ: Դիմանկարի գծապատկերը՝ նուրբ կրճատումներով, բնորդի դեմքին հաղորդել է փոքր-ինչ թատերական, խաղարկային տպավորություն:

Նկատելի է, որ և՛ Աղաջանյանի, և՛ Ռեպինի աշխատանքներում Քրիստափոր Հուսիկյանցի տիպահոգեբանական բնորոշ գծերի արտահայտումը հաջողված է, կերպարների ռեալիստական պատկերագրումը զուգակցված է հոգեբանական խորը, դիպուկ նկարագրի ընդգծմամբ:

Ելնելով աշխատանքների տեխնիկական տարբերությունից՝ հարկ ենք համարում Աղաջանյանի Հուսիկյանցի կենդանագիրը համեմատել Իլյա Ռեպինի մեկ այլ՝ անվանի կոմպոզիտոր Մոդեստ Պետրովիչ Մուսորգսկու յուղանկարի [12, էջ 9-16; 15, էջ 9, վերատպություն N 38] (1881, Պետական Տրետյակովյան պատկերասրահ) հետ՝ ընդգծելով գեղանկարիչների կատարողական առանձնահատկությունները, բնորդների ներաշխարհը բացահայտելու յուրաքանչյուրի ինքնատիպ մոտեցումը:

Տեսանելի է, որ աշխատանքի ստեղծման կարճատև ընթացքում Մուսորգսկու դիմանկարը պահպանել է գուներանգների թարմության, թեթևության առաջին զգացողությունը: Լուսավոր ետնաֆոնին, վրձնի լայն, թարմ ընդհանրացումներով, ներկայանում է կոմպոզիտորի լայնաֆիգուր կեցվածքը:

Դարչնասպիտակավուն նրբերանգներով, քթին ու այտերին նկատելի վարդակարմրի մեղմ քսվածքներով նկարիչն արտահայտել է կոմպոզիտորի դեմքի գունատությունը, վատառողջ վիճակը:

Վրձնի թեթև խաղերով են տրված բնորդի մազերի, մորուքի խառնակ տեսքը:

Գունային միատարր համակցումներով խալաթի կարմրավարդագույն լայն եզրագիծը կոտրում է դիմանկարում գերիշխող գունային սառնությունը:

Վրձնի նուրբ գծաքսվածքներով աչքի է զարնում սլավոնական ազգային նուրբ հյուսվածքներով վերնաշապիկի զարդաշարը:

Մուսորգսկու կերպարի ռեալիստական երփնագրումն ազդեցիկ է և ինքնատիպ: Նրա թափթփված տեսքը չի նսեմացնում կոմպոզիտորի անհատականությունը, այլ՝ համարձակ վրձնաքսվածքներով, գունային բաց, ներդաշնակ հերթագայությամբ ստեղծվել է ներքին մեծ ընդվզումով արտահայտիչ դիմապատկեր:

Մուսորգսկու կերպարի վերարտադրման առանձնահատկությունը նրանում է, որ այն կանոնիկ չէ, չի ստեղծվել հատուկ վայրում, կոմպոզիտորին բնորոշ հարգի հագուկապով: Այն իր պարզությամբ, անմիջականությամբ կարծես հասարակ մարդու կենդանագիր է, թեև կեցվածքը և հայացքի սրությունը մատնում են նրա անհատականությունը:

Այս աշխատանքների համեմատական վերլուծությունը բացահայտում է գեղանկարիչների ռեալիստական պատկերագրման տարբեր դրսևորումներ՝ կոլորիտային, գեղանկարչական հնարքների տարբեր մոտեցումներ, գունագամմային միանգամայն այլ նախասիրություններ, գույնով աշխատելու տարբեր տեխնիկա՝ ձևավորելով բնորդին կերպավորելու ռեալիստական յուրովի աշխարհայացք:

Ռեպինի ստեղծած դիմապատկերում երանգային համակցումները պարզ են, թեթև, հեշտ ընթեռնելի, առինքնող են վրձնաքսվածքների թարմ, լայնարձակ ընդհանրացումները: Լուսային անդրադարձները ձուլված են կտավի բաց երփնագրին և թույլ նկատելի են, մինչդեռ Աղաջանյանի աշխատանքին բնորոշ է խիստ ընդգծված լուսաստվերային խաղը՝ գունային մուգ համադրություններով շաղկապված: Աղաջանյանի երփնագրում հանդիպում ենք երանգների լակոնիկ զուգորդման՝ դարչնասպիտակավունի, մուգ շագանակագույնի խտացված վրձնահետքերով:

Կտավի մուգ երփնագիրը հոգեբանական մեծ ներգործություն է թողնում կերպարի ներքին էության ճշմարտացի վերարտադրման վրա:

Կնոջ դիմանկար

Աղաջանյանի դոնիռոստովյան ստեղծագործություններում կերպարային ինքնատիպությամբ, երփնագրում գունալուսային նուրբ մեկնաբանմամբ առինքնող է «Կնոջ դիմանկար»[2] ստեղծագործությունը:

Բնորդուհու կեցվածքն աչքի է զարնում մարմնի և գլխի որոշակի թեքությամբ: Մի կողմի արված վարսերն ընդգծում են կերպարի արտահայտչականությունը՝ դիտողին ներշնչելով նրբություն, քնքշություն:

Առատ լուսավորությամբ են պարուրված նրա դեմքը, պարանոցը, կրծքավանդակը:

Կարմրասպիտակավունի նուրբ ելևէջներով, պիրկ վրձնախաղերով, լուսաստվերային ներդաշնակ հերթագայությամբ տրվել է բնորդուհու դիմագծերի ճշմարիտ վերարտադրումը:

Սպիտակախառն, կապտակարմրավուն ինտենսիվ քսվածքները նկատելի են լայնաբաց վերնաշապիկի ողջ մակերեսով՝ թողնելով գունային բաց համակցումների թարմ տպավորություն:

Հոգեթափանց գեղանկարիչը վարպետորեն է վերարտադրել բնորդուհու հոգեվիճակ արտահայտող հույզերն ու զգացմունքները:

Արվեստաբան Մանյա Ղազարյանը նրբանկատորեն ընդգծում է. «Աղաջանյանի համար դիմանկարը դառնում է մարդու կենսագրականը գույների լեզվով հաղորդելու գեղեցիկ միջոց: Մի դիմանկարը հնարավորություն էր տալիս ար-

[2] «Կնոջ դիմանկար» ստեղծագործությունը, համաձայն Հայաստանի Ազգային պատկերասրահի տվյալների՝ վերագրվում է 1914-1916 թվականներին [9, էջ 34]:

տահայտել պատկերվողի կողմից տասնյակ տարիների ապրածը, շեշտել այն, որը օգնում է նրա կերպարի ամբողջականացմանը» [4, էջ 3]:

Մարիետա Շահինյանի դիմանկարը

Դոնիռոստովյան շրջանի կանացի դիմապատկերների շարքում կերպարաստեղծման միանգամայն այլ բնութագրմամբ է հանդես գալիս գրող, հասարակական գործիչ Մարիետա Շահինյանի կերպանկարը[3]:

Ի տարբերություն նախորդ աշխատանքի, Մարիետա Շահինյանի կենդանագրում երփնագիրը հանդես է գալիս գունային մեղմ, հանգիստ երանգաշարով՝ ձայնակցելով գրողի՝ անդորր արտահայտող ներաշխարհին:

Շագանակագույնի բաց ու մուգ, կարմրավարդագույնի, կապտամանուշակագույնի սպիտակախառն երանգների նուրբ համակցումներով, վրձնի անկաշկանդ և խիտ քսվածքներով է կերտվել Մարիետա Շահինյանի իրապաշտական դիմանկարը: Լույսի և ստվերի վարդասպիտակավուն շղարշով անդրադարձները բնորդի դիմագծերը դարձրել են արտահայտիչ, ընդգծել շրթունքների, քթի, պարանոցի համաչափ պատկերումը: Աչքերի, թավ հոնքերի կերպավորումը տրված է վրձնի հստակ քսվածքներով:

Ռեալիստ նկարիչը կերտել է անվանի մտավորականի ճշմարիտ բնութագիրը՝ արտաքին և ներքին բովանդակության սերտ միասնությամբ:

Կոմպոզիցիոն միանգամայն այլ մոտեցմամբ է մեզ ներկայանում Հայաստանի ազգային պատկերասրահում պահվող Մարտիրոս Սարյանի 1944-ին վրձնած «Մարիետա Շահինյանի դիմանկարը»:

Վրձնի թեթև քսվածքներով, գունային ներդաշնակ զուգակցումներով ետնաֆոնը ներկայացնում է հայրենի խաղաղ բնաշխարհը՝ ընդգծելով հոգևոր կապը գրողի և իր հայրենիքի միջև: Կտավն ամբողջությամբ լցված է սարյանական բազմերանգությամբ, աշնանային տաք գունազգացողություններով:

Ինչպես նկատել է արվեստաբան Ռուբեն Դրամբյանը «Արևաշող լեռնային բնանկարի և դիմանկարվողի մորենագույն զգեստի զուգորդումը նկարչի մեջ հայտնի է դարձնում նրբանկատ կոլորիստին» [2, էջ 82]:

Հատկանշական է, որ թեև հայ անվանի գեղանկարիչները Մարիետա Շահինյանին պատկերել են տարբեր տարիներին, սակայն երկու աշխատանքներում էլ բնորդուհուն բնորոշ է միևնույն կեցվածքը՝ կտավի կենտրոնում, դիմահայաց՝ գլխի նուրբ թեքությամբ:

Այս աշխատանքները բացահայտում են գեղանկարիչների գունային ընկալման առանձնահատկությունները:

Եթե Սարյանի գունաշարը ներկայանում է երանգների բաց, եթերային հեթագայությամբ, ասելիքն արտահայտված է գունային լուսառատությամբ, ապա Աղաջանյանի գունաշարը հանդես է գալիս մուգ տոնայնություններով, նյութականի հագեցած ընդգծվածությամբ:

[3] Աշխատանքի ստեղծման տարեթվի առնչությամբ հանդիպում ենք 1916 [14, էջ 14] և 1919 [9, էջ 101; 3, էջ 13] թվագրմանը:

Եզրակացություն

Հոգեբան նկարչի սուր դիտողականությամբ Աղաջանյանը բացահայտել է կերպարների բնավորության, անհատական գծերի խորը հոգեբանական տարբերությունները, ռեալիստական ուժով կերտել արտահայտիչ դիմախաղերով խոսուն դիմապատկերներ:

Մեր հետազոտության մեջ ներառված աշխատանքների վերլուծության արդյունքում կարող ենք ասել, որ Ստեփան Աղաջանյանի դոնիռոստովյան շրջանի ստեղծագործությունները հոգեբանական մեծ ներուժով ստեղծված դիմապատկերներ են, որոնք առանձնանում են կատարման բարձր վարպետությամբ, բնորդների ներաշխարհը բացահայտելու յուրատիպ նրբազգացողությամբ:

Գրականություն

1. Աղասյան Ա. Մոռացված անուն. նկարիչ և ճարտարապետ Քրիստափոր (Խաչատուր) Հուսիկյանց (1840-1910), Լրաբեր հասարակական գիտությունների. Երևան, 2014, № 1, էջ 276-289:

2. Դրամբյան Ռ. Մարտիրոս Սարյան. Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 1960:

3. Հայկական ՍՍՌ ժողովրդական նկարիչ Ստեփան Աղաջանյանի ծննդյան 100-ամյակին նվիրված ցուցահանդեսի կատալոգ (գրացուցակ), ՀՍՍՌ կուլտուրայի մինիստրություն, ՀՊՊ. Երևան, ՀՍՍՌ կուլտուրայի մինիստրության հրատարակչությունների և պոլիգրաֆ արդյունաբերության գլխավոր վարչության № 1 տպարան, 1963:

4. Ղազարյան Մ. Ռեալիստական արվեստի ջատագովը (Ստեփան Աղաջանյանի ծննդյան 100-ամյակը), Գրական թերթ. Երևան, 1963, 22 դեկտեմբերի, № 51, էջ 3:

5. Մարտիկյան Ե. Ստեփան Աղաջանյան. Երևան, Հայպետհրատ, 1956:

6. Մարտիկյան Ե. Հայկական կերպարվեստի պատմություն. 20-րդ դարի առաջին քառորդ, Գիրք Գ. Երևան, «Սովետական գրող», 1983:

7. Պարսամյան Ռ. Ստեփան Աղաջանյան. Երևան, Հայպետհրատ, 1963:

8. Սարյան Մ. Գրառումներ իմ կյանքից, Գիրք առաջին. Երևան, «Հայաստան», 1966:

9. Ստեփան Աղաջանյան - 150 (Պատկերագիրք), Առաջաբանը՝ Գ. Եղիազարյանի, ՀԱՊ. Երևան, «Էդիթ Պրինտ», 2013:

10. Քոթանջյան Գ. Ստեփան Աղաջանյանի գեղանկարչությունը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. անցյալը, ներկան և ապագան, Միջազգային գիտաժողով, Զեկուցումների հիմնադրույթներ, հունիսի 21-24, 2006. Ստեփանակերտ-Երևան, Երևանի համալսարանի հրատ., 2007, էջ 496-505:

11. Аким Ованесов (Серия Жизнь замечательных нахичеванцев). Ростов-на-Дону, «Ковчег», 2013.

12. Грабарь И. Репин. Монография в двух томах, т. 2. Москва, «Наука», 1964.

13. Мартикян Е. Творчество художника Степана Агаджаняна, Автореферат диссертации на соискание ученой степени кандидата искусствоведения, Академия наук Армянской ССР, Сектор истории и теории искусств. Ереван, Издательство АН Армянской ССР, 1953.

14. Народный художник Армянской ССР С. М. Агаджанян (К 10-летию со дня его смерти), Каталог выставки, Дом культуру Soветской Армении, Государственная картинная галерея Армянской ССР. Москва, 1951.

15. Русская живопись XIX века, Автор-составитель – Д. Сарабьянов. Москва, Государственное издательство изобразительного искусства, 1962.

References

1. Aghasyan A. Moracvac anun. nkarich ev chartarapet Qristapor (Xachatur) Husikyanc (1840-1910), Lraber hasarakakan gitutyunneri. Yerevan, 2014, № 1, ej 276-289.
2. Drambyan R. Martiros Saryan. Yerevan, Haykakan SSR GA hrat., 1960.
3. Haykakan SSR jhoghovrdakan nkarich Stepan Aghajanyani cnndyan 100-amyakin nvirvac cucahandesi katalog (gracucak), HSSR kulturayi ministrutyun, HPP. Yerevan, HSSR kulturayi ministrutyan hratarakchutyunneri ev poligraf ardyunaberutyan glxavor varchutyan № 1 tparan, 1963.
4. Ghazaryan M. Realistakan arvesti jatagovy (Stepan Aghajanyani cnndyan 100-amyaky), Grakan tert. Yerevan, 1963, 22 dektemberi, № 51, ej 3.
5. Martikyan E. Stepan Aghajanyan. Yerevan, Haypethrat, 1956.
6. Martikyan E. Haykakan kerparvesti patmutyun. 20-rd dari arajin qarord, Girq G. Yerevan, "Sovetakan grogh", 1983.
7. Parsamyan R. Stepan Aghajanyan. Yerevan, Haypethrat, 1963.
8. Saryan M. Grarumner im kyanqic, Girq arajin. Yerevan, "Hayastan", 1966.
9. Stepan Aghajanyan - 150 (Patkeragirq), Arajabany G. Eghiazaryani, HAP. Yerevan, "Edit Print", 2013.
10. Qotanjyan G. Stepan Aghajanyani geghankarchutyuny, Lernayin Gharabaghi Hanrapetutyun. ancyaly, nerkan ev apagan, Mijazgayin gitajhoghov, Zekucumneri himnadruytner, hunisi 21-24, 2006. Stepanakert-Yerevan, Yerevani hamalsarani hrat., 2007, ej 496-505.
11. Akim Ovanesov (Serija Zhizn zamechatelnyh nahichevancev). Rostov-na-Donu, "Kovcheg", 2013.
12. Grabar I. Repin. Monografija v dvuh tomah, t. 2. Moscow, "Nauka", 1964.
13. Martikyan E. Tvorchestvo hudozhnika Stepana Agadzhanyana, Avtoreferat dissertacii na soiskanie uchenoj stepeni kandidata iskusstvovedenija, Akademija nauk Armyanskoy SSR, Sektor istorii i teorii iskusstv. Yerevan, Izdatelstvo AN Armjanskoj SSR, 1953.
14. Narodni hudozhnik Armjanskoj SSR S. M. Agadzhanuan (K 10-letiju so dnja ego smerti), Katalog vystavki, Dom kultury Sovetskoy Armenii, Gosudarstvennaya kartinnaja galereja Armjanskoy SSR. Moscow, 1951.
15. Russkaya zhivopis XIX veka, Avtor-sostavitel – D. Sarabyanov. Moskva, Gosudarstvennoe izdatelstvo izobrazitelnogo iskusstva, 1962.

О НЕКОТОРЫХ ПРОИЗВЕДЕНИЯХ СТЕПАНА АГАДЖАНЯНА РОСТОВСКОГО ПЕРИОДА

МАРИ АБРААМЯН*

Для цитирования: Абраамян, Мари. "О некоторых произведениях Степана Агаджаняна ростовского периода". *Искусствоведческий журнал,* N 1 (2024): 120-128. DOI:10.54503/2579-2830-2024.1(11)-120

В развитии творчества Степана Агаджаняна (1863-1940), выдающегося представителя армянской реалистической портретной живописи, ключевую роль сыграли годы, проведенные им в Ростове-на-Дону (1904-1921). В произведениях

* Соискатель Института искусств НАН РА, mariabrahamyan.art@gmail.com, статья представлена 22.06.2023, рецензирована 01.12.2023, принята к публикации 03.06.2024.

этого периода по-новому проявились его художественные способности: портреты отличаются богатым сочетанием темных тонов, грамотной моделировкой света и тени. Новый подход художника наиболее ярко выражен в таких произведениях, как «Портрет Христафора Усикянца» (1908, Национальная галерея Армении), «Женский портрет» (1914-1916 гг., Национальная галерея Армении), «Портрет Мариэтты Шагинян» (1916, 1919, Национальная галерея Армении). Проницательному портретисту удалось мастерски передать психологический портрет моделей, создать лучшие образцы реалистической живописи.

Ключевые слова: Степан Агаджанян, ростовский период, реализм, психологический портрет, колорит, сочетание темных тонов, мазок.

SOME WORKS OF STEPAN AGHADJANYAN CREATED DURING THE ROSTOV-ON-DON PERIOD

MARI ABRAHAMYAN*

For citation: Abrahamyan, Mari. “Some works of Stepan Aghadjanyan created during the Rostov-on-Don period”, *Journal of Art Studies,* N 1 (2024): 120-128. DOI:10.54503/2579-2830-2024.1(11)-120

Stepan Aghadjanyan is an outstanding representative of Armenian realistic portraiture. The period of 1904-1921 that he spent in Rostov-on-Don was vital in the advancement of his art. During this period, the artist’s painting skills were showcased in a new way: the portraits are distinguished by a rich combination of dark tones, and masterful modeling of light and shadow. The artist’s new technique is evident in works like “Portrait of Christapor Usikyants” (1908, National Gallery of Armenia), “Portrait of a Woman” (1914-1916, National Gallery of Armenia), “Portrait of Marietta Shahinyan” (1916, 1919, National Gallery of Armenia). The psychology of the models was masterfully captured by the painter, resulting in the creation of masterpieces of realistic painting.

Key words: Stepan Aghadjanyan, Rostov-on-Don period, realism, psychological portrait, coloring, combination of dark tones, brushstroke.

* PhD candidate at the NAS RA Institute of Arts, mariabrahamyan.art@gmail.com. The article was submitted on 22.06.2023, reviewed on 01.12.2023, accepted for publication on 03.06.2024.

Քրիստափոր Հուսիկյանցի դիմանկարը, կտավ, յուղաներկ, 60x48, 1908, ՀԱՊ

Կնոջ դիմանկար, կտավ, յուղաներկ, 49,5x38, 1914-1916, ՀԱՊ

Մարիետա Շահինյանի դիմանկարը, կտավ, յուղաներկ, 55x39,5, 1916, 1919, ՀԱՊ